ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 649 -Ա **25 հոկտեմբերի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 319 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի N 806-Ն որոշումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2023 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող մարզային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունվարի 23-ի N 16-Ա և 2022 թվականի փետրվարի 7-ի N 58-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 319-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելված N 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի.

2) որոշման հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 2-ի:

25.10.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հոկտեմբերի 25 - ի
N 649-Ա որոշման

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի օգոստոսի 22 - ի
N 319 - Ա որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ

Ջանիկ Բազեյան - Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, **հանձնաժողովի նախագահ**

Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, **հանձնաժողովի նախագահի տեղակալ**
/համաձայնությամբ/

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Գևորգ Խաչատրյան - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ:»:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2024-10-25 12:31:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հոկտեմբերի 25 - ի
N 649-Ա որոշման

«Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի օգոստոսի 22 - ի
N 319 – Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման տարածքից, հետևանքների բնույթից և նշանակությունից, համապատասխանաբար կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի ու մարզի համայնքների ղեկավարների որոշումներով ստեղծված և մշտական գործող հանձնաժողովների կողմից:

3. Գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման ու վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների ընդհանուր հաշվառումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը և մարզի տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ըստ ուղղությունների՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման մարմինները:

6. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը, իսկ անշարժ գույքի դեպքում՝ նաև դրա նույնականացման տվյալները (վկայականի համար և գույքի հասցե կամ կադաստրային ծածկագիր).

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3) գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

7. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

8. Տեղեկատվությունը ներառում է՝

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

9. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման նպատակով ստեղծվում են՝

1) մարզային հանձնաժողով (ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ).

2) համայնքային հանձնաժողովներ (ստեղծվում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարների որոշումներով):

10. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային և համայնքային հանձնաժողովները գործում են հետևյալ ուղղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.
2) բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.
3) ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.
4) բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

11. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի կազմում՝ ըստ ուղղությունների ընդգրկվում են ներքին գործերի, առողջապահության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները:

12. Ելնելով հանձնաժողովների աստիճանակարգությունից՝ համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով: Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:»:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2024-10-25 12:32:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ